

Արմեն Յ. Մարուքյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ստորագրման 90-ամյակի առիթով\*

Հայ իրավական միտքը վաղուց է արձանագրել այն փաստը, որ 1921 թ. Մոսկվայի ու Կարսի պայմանագրերը ստորագրվել են միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների կոպիտ խախտումներով: Հայաստանի անկախության վերականգնումից հետո պայմաններ են ստեղծվել նման գնահատականները ակադեմիական ոլորտից միջազգային քաղաքականության ասպարեզ տեղափոխելու համար: Այս առումով հարկավոր է առաջնորդվել ինչպես Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի ստորագրման պահին գործող միջազգային իրավունքի նորմերով, այնպես էլ Ազգերի Լիգայի Ստատուտի (Կանոնադրության) և Վիեննայի 1969թ. մայիսի 23-ի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի դրույթներով: Դա թույլ կտա ճիշտ հաշվարկել 1921 թ. Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի դեմ մեր հակաքայլերի հնարավոր տարբերակները:

### Մուտք

Ի սկզբանե նշենք, որ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի «Բարեկամության և եղբայրության մասին» խորհրդա-թուրքական պայմանագիրը ստորագրվելու պահին վաղուց արդեն ուժի մեջ էին Հաագայի Խաղաղության կոնֆերանսի ընթացքում՝ 1907 թ. հոկտեմբերի 18-ին, ի թիվս 13 այլ պայմանագրերի ստորագրված՝ «Միջազգային բախումների խաղաղ կարգավորման մասին» և «Պայմանագրային պարտավորությունների կատարման հարցում ուժի կիրառման սահմանափակման մասին» կոնվենցիաները: Դրանցում առաջադրվում էր այն գաղափարը, որ պետությունների անվտանգության և ժողովուրդների բարեկեցության հիմքում պետք է դրվեն իրավունքի ու արդարության սկզբունքները, նրանք չպետք է դիմեն այլ պետությունների նկատմամբ ռազմական ուժի՝ պայմանագրային պարտավորությունները կատարել տալու նպատակով<sup>1</sup>:

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 15. 05. 2011:

1 Տե՛ս Международное право. Ведение военных действий. Сборник Гаагских конвенций и иных международных документов, М., 2001.

Գ. (Թ) Գրքի, թիվ 2 (34) ամբի-հունիս, 2011

Վեմ համահայկական հանդես

Հետագայում՝ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, նշված սկզբունքները էլ ավելի հստակորեն ամրագրվեցին Ազգերի Լիգայի Ստատուտի (Կանոնադրության) մեջ, որտեղ ամրագրվում էին ազգ-պետությունների միջև հարաբերություններում սեփական պարտավորությունները կատարելու, ինչպես նաև պետությունների տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը հարգելու սկզբունքները: Նշված սկզբունքները խախտելու պարագայում, համաձայն Ազգերի Լիգայի Կանոնադրության, այդ կազմակերպությունը իրավասու էր անգամ դիմել պատժամիջոցների՝ արդարությունն ու խաղաղությունը վերականգնելու համար, ընդհուպ ռազմական ուժի կիրառման իրավունքը<sup>2</sup>: Նշված միջազգային փաստաթղթերը հիմք դրեցին միջազգային իրավունքի և մասնավորապես՝ միջազգային պայմանագրային իրավունքի կողմնակցի հայտնի (համակարգմանը):

Մինչդեռ, պետք է արձանագրել, որ թե՛ Մոսկվայի և թե՛ առավել ևս՝ Կարսի պայմանագրերում նկատվում էին տվյալ պահին գործող միջազգային իրավունքի անբաժան մասը կազմող՝ ուժի կիրառման բացառման ու պետությունների տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը հարգելու նորմերի և սկզբունքների կոպիտ խախտումներ:

## 1. Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի իրավական արժեքը

Միջազգային պայմանագրային իրավունքը մարմնավորող հիմնական միջազգային փաստաթուղթ է համարվում Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի «**Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին**» կոնվենցիան, որն ամբողջականացրել է միջազգային իրավունքի պայմանագրային ուղղության կողմնակցի հայտնի: Ուստի ներկայումս ցանկացած երկկողմ կամ բազմակողմ պայմանագրի օրինականության հարցը ճշգրտվում է հենց տվյալ փաստաթղթի դրույթների հիման վրա: Այս իմաստով ծագում է Վիեննայի կոնվենցիայի հետադարձ ուժի և Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի նկատմամբ կիրառելիության հարցը: Կոնվենցիայի 4-րդ հոդվածով այն կիրառելի է միայն կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո պետությունների կողմից ստորագրված պայմանագրերի նկատմամբ: **Մակայն մույն հողվածով սահմանվում է նաև, որ կոնվենցիայի հետադարձ ուժի բացառման դրույթը չպետք է վնաս հասցնի կոնվենցիայում շարադրված միջազգային իրավական նորմերի գործադրմանը, որոնք կիրառելի են պայմանագրերի նկատմամբ ընդհանրապես**<sup>3</sup>: Այսինքն՝ այս հոդվածով ամրագրվում է Վիեննայի կոնվենցիայի կողմնակցնող բնույթը և արձանագրվում է, որ այդ կոնվենցիան փաստորեն նոր բան չի հայտնագործել, այլ ընդամենն ամփոփել է մինչ այդ միջազգային իրավունքում կիրառված՝ պայմանագրային իրավունքին վերաբերող նորմերն ու սկզբունքները:

Հայտնի է, որ Մոսկվայի պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածքներից Կարսը, Արդահանը, Սուրմալուն հանձնվում էին Թուրքիային, իսկ Նախիջևանը դրվում էր Ադրբեջանի խնամակալության տակ, պայմանով, որ վերջինս այն չի զիջի երրորդ պետությանը<sup>4</sup> (Հայաստանին): Այս դրույթները խախ-

2 St' u Versalskiy mirnyy dogovor. Polnyy perevod s frantsuzskogo, pod redaktsiei Yu. V. Klyuchnikova i A. Sabanina., M.: Izdaniye Litizdata NKID, 1925, s. 7-15.

3 St' u Mezhdunarodnoye pravo v dokumentakh, sost. sbornika N. T. Blatova, M., 1982, s. 71.

4 St' u Յայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության

տում էին միջազգային իրավունքի *jus cogens* (իմպերատիվ), այսինքն՝ պարտադիր ու անբեկանելի նորմը<sup>5</sup>: Քանզի համաձայն Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածի, պայմանագիրը կարող է պարտադիր լինել միայն այն ստորագրող կողմերի համար, իսկ 35-րդ հոդվածը սահմանում է, որ երկու կողմերի միջև ստորագրված պայմանագիրը կարող է պարտավորություն առաջացնել երրորդ կողմի համար միայն այն դեպքում, երբ նա որոշակիորեն՝ գրավոր ձևով, ստանձնել է այդ պարտավորությունը<sup>6</sup>:

## 2. Խորհրդային Ռուսաստանի դեկրետները և Մոսկվայի պայմանագիրը

Հայտնի է, որ իր 1917 թ. հոկտեմբերի 26-ի «Խաղաղության մասին» դեկրետով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, առանց փոքր ժողովուրդների հստակ ու կամավոր համաձայնության, վերջիններիս մեծ ժողովուրդներին կամ պետություններին միացնելը և նրանց տիրապետելը (անկախ դրա կատարման ժամկետից) գնահատում էր իբրև այդ ժողովուրդների տարածքների բռնակցում: Իսկ Խորհուրդների համառուսաստանյան երրորդ համագումարի՝ «Խորհրդային կառավարության ազգային քաղաքականությանը հավանություն տալու մասին» 1918 թ. հունվարի 15-ի որոշումով արձանագրվում էր, որ Խորհրդային իշխանությունները Ռուսաստանյան կայսրության կազմում բռնությամբ պահվող ժողովուրդների ճակատագրի հետ կապված հարցերում միանշանակորեն պետք է առաջնորդվեն ազգերի ինքնորոշման սկզբունքով<sup>7</sup>: Այս փաստաթղթերով Խորհրդային Ռուսաստանը հրաժարվել է Ռուսաստանյան կայսրության տարածքներից՝ իբրև ժառանգությունից, ինչի արդյունքում, ինչպես հայտնի է, անկախություն ստացան Ֆինլանդիան և Ուկրաինան: Եվ այդ ամենից ընդամենը մի քանի ամիս անց Ռուսաստանյան կայսրության նախկին տարածք Արևելյան Հայաստանում հռչակվել է անկախ, ինքնիշխան պետություն, որը որևէ փաստաթղթով չի ընդունել Խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը՝ Թուրքիայի հետ իր հարաբերություններում և հետևաբար՝ չի տվել իր գրավոր համաձայնությունը, չի լիազորել Մոսկվայի պայմանագիրը ստորագրող կողմերին՝ որոշելու իր տարածքների ճակատագիրը<sup>8</sup>: Իսկ համաձայն Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդվածի՝ *jus cogens* իմպերատիվ սկզբունքների խախտումով կնքված պայմանագրերն առ ոչինչ են և չեն կարող ունենալ իրավական ուժ<sup>9</sup>:

Այսպիսով՝ Մոսկվայի պայմանագիրը ստորագրվել է առանց Հայաստանի մասնակցության, իսկ որևէ պայմանագիր կարող է պարտավորություն դնել միայն այն ստորագրող կողմերի, այլ ոչ թե երրորդ երկրի վրա: Հայաստանն այդ պայմանագրի կողմ չէր, հետևաբար՝ **հայկական հողերի հանձնումը չի կարող համարվել պարտավորություն Հայաստանի համար, եթե անգամ անտեսենք այն հանգամանքը, որ տվյալ պայմանագրով խախտվել է նաև ազգերի ինքնորոշման իրա-**

փաստաթղթերում (1828-1923), Եր., 1972, էջ 500-501:

5 Տե՛ս Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները (հոդվածների ժողովածու), Եր., 2007, էջ 29:

6 Տե՛ս Международное право в документах, с. 81.

7 Տե՛ս Декреты Советской власти. Том I., 25 октября 1917 г. – 16 марта 1918 г., М., 1957.

8 Տե՛ս Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 212:

9 Տե՛ս Международное право в документах, с. 87.

### վունքը<sup>10</sup>:

Հատկանշական է, որ Խորհրդային Ռուսաստանը Մոսկվայի պայմանագիրը ստորագրել է նաև ներպետական իրավական ակտերի խախտումով: Ինչպես հայտնի է, ի առաջին արտաքին քաղաքական փաստաթղթում՝ «**Խաղաղության մասին**» դեկրետում, խորհրդային կառավարությունը սկզբունքորեն դատապարտել է անեքսիան, այն բնութագրելով ոչ միայն որպես օտար տարածքների բռնագրավում, այլև որևէ ազգի ազատորեն արտահայտված կամքին հակառակ, բռնությամբ, նրան որևէ պետության կազմի մեջ պահելու միջոցով՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի ոտնահարում: Հետևաբար, ստորագրելով Մոսկվայի պայմանագիրը և Թուրքիայի սեփականությունը ճանաչելով Կարսը, Արդահանն ու Սուրմալուն, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, հակառակ իր իսկ հռչակած սկզբունքների, ճանաչել և վավերացրել է թուրքական անեքսիայի արդյունքները<sup>11</sup>: Էլ չենք խոսում 1917 թ. դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանի մասին» դեկրետի վերաբերյալ, որով Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքը, ընդհուպ՝ անկախության հռչակումը:

### 3. Մոսկվայի պայմանագրի հակասական դրույթները

Պետք է արձանագրել նաև, որ Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի կոնկրետ հոդվածներն ուղղակի հակասության մեջ են մեկը մյուսի հետ: Այսպես՝ որքան էլ դա տարօրինակ է, միջազգային իրավունքում առկա ուժի սպառնալիքի կամ պարտադրանքի տակ ստորագրված պայմանագրերի անընդունելիության սկզբունքն ամրագրված է Մոսկվայի պայմանագրի հենց 1-ին հոդվածով<sup>12</sup>: Ու թեև կողմերը քողարկված կերպով նկատի են ունեցել միայն Սևրի պայմանագիրը, սակայն տվյալ հոդվածում խոսքը ոչ թե որևէ կոնկրետ փաստաթղթի, այլ ընդհանրապես՝ բոլոր պայմանագրերի մասին է:

Բայց այս նորմի ամրագրումը չխանգարեց, որ նույն պայմանագրի 15-րդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը պարտավորություն ստանձնի Թուրքիայի հանդեպ՝ քայլեր ձեռնարկել անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ, որպեսզի նրանք Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում պարտադիր կարգով ճանաչեն Մոսկվայի պայմանագրի՝ անմիջականորեն իրենց վերաբերող հոդվածները<sup>13</sup>: Դա նշանակում էր, որ Ռուսաստանը պարտավորվում էր ճնշման միջոցով ստիպել Անդրկովկասի ինքնիշխան պետություններին և մասնավորապես՝ Խորհրդային Հայաստանին, ճանաչել Թուրքիայի հետ կնքված իր ապօրինի գործարքը, ինչը միջազգային իրավունքի նորմերի կոպիտ խախտում էր: **Այսպիսով՝ քիչ անց Կարսում ստորագրված փաստաթղթի հիմքը կազմող Մոսկվայի պայմանագիրը կնքվել է միջազգային իրավունքի կոպիտ խախտումներով, ուստի վերջինս նույնպես չի կարող ճանաչվել որպես իրավական ուժ ունեցող պայմանագիր:**

10 Տե՛ս Թորիկեան Ը. Հայկական հարցը և միջազգային օրենքը, Պեյրուս 1976, էջ 106:

11 Տե՛ս Հակոբյան Զ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Եր., 2000, էջ 236:

12 Տե՛ս Հայաստանը... փաստաթղթերում, էջ 500:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 504:

#### 4. Կարսի փաստաթուղթը հնարավոր չէ նույնիսկ պայմանագիր անվանել

Խորհրդային Ռուսաստանը չհաստատեց կատարել Թուրքիային տված իր խոստումը, և նույն՝ 1921 թվականի հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրվեց փաստաթուղթ մի կողմից՝ Թուրքիայի, իսկ մյուս կողմից՝ Անդրկովկասի երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև: Այն իրողությունը, որ Ռուսաստանը մինչ այդ արդեն սկսել էր կատարել Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը և ճնշում էր գործադրում Հայաստանի վրա, որպեսզի նա պայմանագիր կնքի Թուրքիայի հետ, ակնհայտորեն վկայում է, որ Մոսկվայի պայմանագիրն արդեն իսկ վավերացվել է ուժի մեջ էր մտել: Այսպիսով, Կարսի փաստաթուղթը հանդիսանում էր Մոսկվայի պայմանագրի հետևանքը և կրում էր զուտ ձևական բնույթ, որով Ռուսաստանը և Թուրքիան փորձում էին իրավական տեսք տալ իրենց ապօրինի գործարքին<sup>14</sup>: «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն՝ «Պայմանագիրն առ ոչինչ է, եթե նրա ստորագրումը հանդիսանում է ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման հետևանք՝ ի խախտումն միջազգային իրավունքի այն սկզբունքների, որոնք արտացոլվել են ՍԱԿ-ի կանոնադրության մեջ»<sup>15</sup>:

Կարսի «պայմանագիրը» ստորագրվեց Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ՝ ի դեմս Լատվիայում Ռուսաստանի լիազոր ներկայացուցչի Յակով Գանեցկու<sup>16</sup>: Սակայն այդ հանգամանքը չէր հստակեցնում տվյալ երկրի մասնակցության իրավական կարգավիճակը, քանզի Խորհրդային Ռուսաստանը չէր հանդիսանում Կարսի փաստաթղթի ո՛չ պայմանավորվող և ո՛չ էլ միջնորդ կողմը: Ուրեմն՝ Ռուսաստանի մասնակցությունը տվյալ պարագայում կարող է բացատրվել միայն Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով, ի կատարումն որի՝ նրա ներկայացուցիչը մասնակցել է Կարսի պայմանագրի ստորագրմանը: Յա. Գանեցկու չճշտված կարգավիճակը հիմք է տալիս պնդելու, որ նա Մոսկվայի հրահանգով վերահսկում էր, մասնավորապես, Հայաստանի ներկայացուցիչների՝ Ա.Մռավյանի և Պ.Մակինցյանի գործողությունները, որպեսզի չձախողվի Մոսկվայի գործարքը: Այս հանգամանքը նույնպես համարվում է միջազգային իրավունքի սկզբունքների կոպիտ խախտում: Նույն՝ Վիեննայի կոնվենցիայի 51-րդ հոդվածով սահմանվում է, որ այն դեպքում, երբ պետության համար պայմանագրի պարտադիր լինելու համաձայնությունը ձեռք է բերվել նրա ներկայացուցչի նկատմամբ պարտադրանքի գործողություններով կամ սպառնալիքներով, այդ համաձայնությունը չի կարող իրավական ուժ ունենալ<sup>17</sup>:

Կարսի փաստաթուղթը ստորագրելու ժամանակ բոլշևիկյան քարոզչության ազդեցության տակ գտնվող հայ ներկայացուցիչները թերևս համոզված էին, որ Խորհրդային Ռուսաստանի միջնորդությամբ իրականացվող այդ գործարքը հայ ժողովրդի փրկության միակ հնարավորությունն է, քանզի Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով արդեն տարածքային մեծ զիջումներ էր կատարել թուրքերին<sup>18</sup>: Ասվա-

14 Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 107:

15 Международное право в документах, с. 86.

16 Տե՛ս Հայաստանը... փաստաթղթերում, էջ 518:

17 Տե՛ս Международное право в документах, с. 86.

18 Տե՛ս Հայաստանը... փաստաթղթերում, էջ 770:

ծի ապացույցը թերևս այն է, որ Կարսի պայմանագրի 1-ին հոդվածով չեղյալ էին համարվում մինչ այդ ստորագրված երկկողմ պայմանագրերը<sup>19</sup>, ինչի տակ պետք է հասկանալ նախևառաջ Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Այս առիթով պետք է նշել սակայն, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը առանց այդ էլ չուներ և չէր կարող ունենալ իրավական ուժ հետևյալ պատճառներով.

ա. պայմանագիրը հայկական կողմից ստորագրել էին արդեն տապալված կառավարության ներկայացուցիչները, որոնք իրավասու չէին այն ստորագրել,

բ. պայմանագիրը ստորագրվել էր ուժի բացահայտ կիրառման և ուժի սպառնալիքի պայմաններում և ուղղված էր ինքնորոշման իրավունքի դեմ,

գ. համաձայն Ալեքսանդրապոլի պայմանագրի 15-րդ հոդվածի՝ պայմանագիրը պետք է վավերացվեր մեկ ամսվա ընթացքում, սակայն այն ընդհանրապես չի վավերացվել<sup>20</sup>:

Բացի այդ, չպետք է մոռանալ, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը նույնպես բուլղարիկա-քեմալական խաղերի և Հայաստանի վրա իրականացված երկկողմ ճնշումների արդյունք էր: Իսկ Մոսկվայի կոնֆերանսից մինչև Կարսի կոնֆերանսն ընկած մոտ կես տարվա ընթացքում Ալեքսանդրապոլի պայմանագրի «փաստարկով» հայկական կողմին ապակողմնորոշելը նույնպես միջազգային իրավունքի նորմերի խախտում էր: Մինչդեռ, Վիեննայի կոնվենցիայի 49-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրն առ ոչինչ է, եթե այն ստորագրվել է պայմանավորվող կողմի ներկայացուցչի խաբեության կամ ապակողմնորոշման միջոցով<sup>21</sup>:

Կարսի փաստաթուղթը բառացի կրկնում ու վերարտադրում էր Մոսկվայի պայմանագրի հոդվածները և այդ ճանապարհով «օրինականացնում էր» Մոսկվայի բուլղարիկա-քեմալական գործարքը: Հատկանշական է, որ Թուրքիայի հետ փոխադարձ պայմանավորվածությամբ՝ Կարսի պայմանագրի կողմ չհանդիսացող Խորհրդային Ռուսաստանը ավելի շուտ վավերացրեց տվյալ պայմանագիրը (1922 թ. մարտի 16), քան կողմ հանդիսացող Խորհրդային Հայաստանը (1922 թ. մարտի 20)<sup>22</sup>: Այս կերպ Ռուսաստանն օր առաջ ջանում էր վերահաստատել իր հավատարմությունը Թուրքիայի հետ Մոսկվայում կայացած գործարքին:

**Թվարկված կոպիտ խախտումների հանրագումարը գալիս է հաստատելու, որ միջազգային իրավունքի տեսանկյունից Կարսում ստորագրված փաստաթուղթը չի կարող համարվել անգամ առանձին պայմանագիր, այլ լավագույն դեպքում՝ Մոսկվայի անօրինական գործարքի հավելված:**

## 5. Երկու փաստաթղթերի միջև առկա հակասությունները

Քանի որ Կարսում ստորագրված դե-յուրե անօրինական փաստաթղթի հիման վրա սահմանագծվեց հայ-թուրքական սահմանը, ուստի հարկ ենք համարում միջազգային իրավունքի տեսանկյունից քննության առնել դրա հոդվածներն ու դրույթները: Առաջին իսկ հոդվածում, բացի մինչ այդ պայմանավորվող կողմերի

19 Տե՛ս նույն տեղում, էջ 518:

20 Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 107:

21 Տե՛ս Международное право в документах, с. 86.

22 Տե՛ս Խաչատրյան Կ., ՀԽՍՀ սահմանների հարցը 1921թ. խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում (Մոսկվայի և Կարսի կոնֆերանսները), «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2010, N 1-2, էջ 55:

միջև ստորագրված փաստաթղթերի, ուժը կորցրած էին համարվում նաև երրորդ երկրների կողմից կնքված պայմանագրերը, որոնք վերաբերում էին Անդրկովկասյան հանրապետություններին<sup>23</sup>: Մույն հոդվածի հատուկ ձևակերպումներից ամմիջապես հասկացվում էր, որ դրանով փորձ էր արվում չեզոքացնել Սևրի պայմանագիրը: Առավել ևս, որ նույն հոդվածը բացառություն էր անում միայն 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի համար<sup>24</sup>, քանզի այդ անօրինական գործարքն էր կազմում Կարսում պարտադրված փաստաթղթի հիմքը: Մակայն այս առաջին հոդվածին տրամազծորեն հակասում է Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածը, որով «Թուրքիան համաձայնվում էր չճանաչել որևէ միջազգային պայմանագիր կամ ակտ, որը վերաբերում է Հայաստանին, Ադրբեջանին ու Վրաստանին և ճանաչված չէ այդ երկրների կառավարությունների կողմից, որոնք այսօր ներկայացնում են Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի խորհուրդներին»<sup>25</sup>:

Այսպիսով, ակնհայտ է, որ Խորհրդային Հայաստանը Մոսկվայի պայմանագիրը ճանաչել է միայն Կարսի պայմանագրի ստորագրումով, այսինքն՝ մինչ այդ պահը Հայաստանը չի ճանաչել Մոսկվայի պայմանագիրը: Խորհրդային Հայաստանի կառավարությունը նույնիսկ բողոք է ներկայացրել Ռուսաստանի կառավարությանը, որ առանց իր մասնակցության է լուծել իր տարածքային հարցերը: Հայաստանի արտգործկոմն և պատվիրակության ղեկավար Ա. Բեկզադյանը 1921 թ. ապրիլի 15-ին այս կապակցությամբ հայտարարություն է ուղղել Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինին: Իսկ քիչ անց՝ մայիսի 19-ին, ՀԿԿ Կենտկոմի պլենումը, լսելով Ա. Բեկզադյանի հաշվետվությունը ռուս-թուրքական բանակցություններում հայկական պատվիրակության աշխատանքների մասին, հավանություն է տվել նրա քաղաքական գծին<sup>26</sup>:

Այսպիսով, Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ Թուրքիան պետք է անվավեր ճանաչեր նաև Մոսկվայի պայմանագիրը, ուստի և անօրինաչափ էր նույն փաստաթղթի 1-ին հոդվածով Մոսկվայի պայմանագրի համար բացառություն անելը: Ավելին, Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածը կրկնում էր Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածը, որով պայմանավորվող կողմերը համաձայնում էին չճանաչել ոչ մի պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտ, եթե կողմերից մեկին հարկադրել են այն ընդունել<sup>27</sup>: Մինչդեռ, Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը հարկադրանքի ամենավառ դրսևորումն էր Անդրկովկասյան հանրապետությունների ու մասնավորապես՝ Հայաստանի նկատմամբ: Ուստի՝ Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածի վերը նշված դրույթը լիովին չեզոքացնում էր ոչ միայն տվյալ փաստաթղթի հիմքը կազմող Մոսկվայի պայմանագիրը, այլև իմաստազրկում էր Կարսում ստորագրված փաստաթուղթը:

Հոդվածների միջև առկա այս աղաղակող հակասությունները խոսում են այն մասին, որ գործարքի նախաձեռնողները՝ քեմալականներն ու բոլշևիկները, Մոսկվայում, առավել ևս՝ Կարսում առանձնապես ջանք չեն գործադրել ոչ միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները և ոչ էլ անգամ տրամաբանության տարրական կանոնները պահպանելու համար: Ուղղակի նրանք ձգտել են ժամ առաջ «օրինականացնել» Մոսկվայում կայացած գործարքը՝ Կարսում Հայաստանի ներկայացուցչի ստորագրությունը դրա տակ դնելու միջոցով:

23 Տե՛ս Հայաստանը...փաստաթղթերում, էջ 518:

24 Տե՛ս նույն տեղում, էջ 518-519:

25 Նույն տեղում, էջ 519:

26 Տե՛ս Հակոբյան Հ., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 215:

27 Տե՛ս Հայաստանը...փաստաթղթերում, էջ 519:

## 6. Կարսի փաստաթղթով ստանձնած պարտավորությունների անտեսումը Թուրքիայի կողմից

Պետք է նշել նաև, որ Թուրքիան չի կատարել Կարսի փաստաթղթով իր ստանձնած որոշ պարտավորությունները: Այսպես՝ համաձայն նրա 14-րդ հոդվածի, պայմանավորվող կողմերը պարտավորվում էին Կարսի փաստաթղթի ստորագրման օրից հաշված՝ 6 ամսվա ընթացքում կնքել 1918-1920 թթ. պատերազմի հետևանքով գաղթածներին վերաբերող հատուկ համաձայնագիր<sup>28</sup>: Իսկ 19-րդ հոդվածով՝ Կարսի փաստաթղթի ստորագրման օրից հաշված՝ 3 ամսվա ընթացքում պետք է կնքվեին հյուպատոսական կոնվենցիաներ Անդրկովկասյան հանրապետությունների հետ<sup>29</sup>: Ընդ որում, փաստաթղթի 20-րդ հոդվածը նշված պարտավորությունները ուժի մեջ էր մտցնում ոչ թե վավերագրերի փոխանակման պահից, այլ անմիջապես՝ փաստաթղթի ստորագրման պահից սկսած<sup>30</sup>:

Այսպիսով, Թուրքիան, ըստ նշված հոդվածների, մինչև 1922 թ. հունվարի 13-ը Անդրկովկասյան հանրապետությունների ու մասնավորապես Հայաստանի հետ պետք է կնքեր հյուպատոսական կոնվենցիա, իսկ մինչև ապրիլի 13-ը՝ գաղթականներին վերաբերող հատուկ համաձայնագիր: Ավելորդ է նշել, որ նման համաձայնագրեր չեն ստորագրվել, մինչդեռ հյուպատոսական համաձայնագրի առկայությունը այսօր Հայաստանի Հանրապետությանը իրավական հնարավորություն կտար գոնե հյուպատոսության միջոցով պաշտպանել Թուրքիայում գտնվող իր քաղաքացիների օրինական շահերն ու իրավունքները: Էլ չենք խոսում գաղթականների վերաբերյալ համաձայնագրի մասին, որը բացարձակապես ձեռնտու չէր Թուրքիային, քանզի ծագելու էին հայ գաղթականների իրավունքների վերականգնման ու հատուցման բազում հարցեր, որոնք չէին բխում քեմալականների շահերից: Քեմալականները արդեն իսկ «լուծել էին» իրենց գերխնդիրը: Մոսկվայի գործարքը օրինական տեսք էր ստացել Կարսում՝ դրա տակ Հայաստանի ներկայացուցչի ստորագրությունը դնելով, ուստի քեմալականների ու բոլշևիկների համար նման «մանրուքները» այլևս որևէ արժեք չունեին:

Բացի իր պարտավորությունները չկատարելուց, Թուրքիան նաև խախտել է Կարսի փաստաթղթի խիստ որոշակի հոդվածներն ու դրույթները: Այսպես՝ համաձայն 10-րդ հոդվածի, որը Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածի կրկնությունն է, կողմերը պարտավորվել էին իրենց տարածքներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք մյուս երկրի կամ նրա տարածքի մի մասի կառավարման դերը ստանձնելու հավակնություն ունեն, ինչպես նաև իրենց տարածքում արգելել այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարել մյուս երկրի դեմ<sup>31</sup>: Ակնհայտ է, որ բոլշևիկների ու քեմալականների համար փոխշահավետ այս դրույթը ուղղված էր Խորհրդային Հայաստանում հայ ավանդական կուսակցությունների և առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցության գործունեության հնարավորությունը բացառելու նպատակին: Պետք է նշել, սակայն, որ ի տարբերություն Խորհրդային Հայաստանի, Թուրքիան իր տարածքում ոչ միայն թույլ է տվել հակահայկական կառույցների գործունեությունը, այլև մինչ օրս հովանավորում է դրանց: Ավելին՝ թուրքական պետությունն ի դեմս իր բարձ-

28 Տե՛ս նույն տեղում, էջ 522:

29 Տե՛ս նույն տեղում:

30 Տե՛ս նույն տեղում:

31 Տե՛ս Դայաստանը...փաստաթղթերում, էջ 521:



րաստիճան պաշտոնյաների, վարել ու վարում է բացահայտ հակահայկական քաղաքականություն ու քարոզչություն:

Կարսի փաստաթղթի 17-րդ հոդվածով կողմերը պարտավորվել են «առանց որևէ կասեցումների ապահովել մարդկանց ու ապրանքների ազատ փոխադրումը»<sup>32</sup>: Մինչդեռ Թուրքիան 1993-ից մինչ օրս իրականացնում է Հայաստանի շրջափակումը՝ միակողմանիորեն փակելով սահմանը, ինչով խախտում է Կարսի փաստաթղթի համապատասխան հոդվածը: Ավելին, համաձայն Կարսի փաստաթղթի 2-րդ հավելվածի՝ Արաքսի գոտու հատվածում Թուրքիան պարտավորվել է Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղուց 8 և 4 վերստ հեռավորության վրա գտնվող զծերով սահմանված գոտիներում չպահել կանոնավոր զորքեր<sup>33</sup>: Մինչդեռ քաջ հայտնի է, որ 1993 թվականին Թուրքիան չբավարարվեց միայն Հայաստանի շրջափակումով, այլ կատարեց երկրորդ հակաօրինական քայլը և դիմեց «ուժի ցուցադրության»՝ սահմանի մոտ տեղակայելով թուրքական կանոնավոր զորքեր:

## 7. Հայաստանի հնարավոր հակաքայլերը

Այժմ տեսնենք, թե վերը նշված փաստարկներով հանդերձ, ժամանակակից միջազգային իրավունքն ինչ հնարավորություններ է ընձեռում Հայաստանի Հանրապետությանը՝ այս անօրինական փաստաթղթերի դեմ գործելու առումով: Ընդհանուր առմամբ կարելի է նշել Հայաստանի հետևյալ հնարավոր հակաքայլերը.

1. Հայաստանը, հիմք ընդունելով Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 49-րդ հոդվածը, ըստ որի պայմանագիրն առ ոչինչ է, եթե այն ստորագրվել է պայմանավորվող կողմի ներկայացուցչի խաբեության կամ ապակողմնորոշման միջոցով, 51-րդ հոդվածը, ըստ որի պայմանագիրն առ ոչինչ է այն դեպքում, երբ պետության համար պայմանագրի պարտադիր լինելու համաձայնությունը ձեռք է բերվել նրա ներկայացուցչի նկատմամբ պարտադրանքի գործողություններով կամ սպառնալիքներով, 52-րդ հոդվածը, ըստ որի պայմանագիրն առ ոչինչ է, եթե նրա ստորագրումը հանդիսանում է ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման հետևանք, կարող է **Կարսի փաստաթուղթը հայտարարել առ ոչինչ**: Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 69-րդ հոդվածի 1-ին կետով առ ոչինչ համարվող պայմանագրերը իրավական ուժ չունեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագիրն առ ոչինչ է համարվում կոնվենցիայի 49, 50, 51 կամ 52 հոդվածների հիմքերով, ապա նշված գործողություններում պատասխանատու կողմը որևէ պահանջի իրավունք չունի մյուս կողմի նկատմամբ<sup>34</sup>: Սա նշանակում է, որ նշված գործողություններն ապացուցվելու դեպքում Թուրքիան ոչ մի պահանջ չի կարող ներկայացնել Հայաստանին՝ Կարսի փաստաթղթով ստանձնած պարտավորությունների հետ կապված:

2. Հայաստանը կարող է հարց բարձրացնել և պահանջել, որ Թուրքիան կատարի Կարսի փաստաթղթի 14 և 19 հոդվածներով իր ստանձնած պարտավորությունները, այսինքն՝ Հայաստանի հետ կնքի ինչպես հյուպատոսական կոնվենցիա, այնպես էլ 1918-1920 թթ. պատերազմի հետևանքով գաղթածներին

32 Նույն տեղում, էջ 523:

33 Տե՛ս նույն տեղում, էջ 526:

34 Տե՛ս *Международное право в документах*, с. 92.

վերաբերող հատուկ համաձայնագիր և վերացնի Կարսի փաստաթղթի 10 և 17 հոդվածների ու 2-րդ հավելվածի 2-րդ մասի դրույթների խախտումները, բացի այդ, առանց որևէ կասեցումների ապահովի մարդկանց ու ապրանքների ազատ փոխադրումը, ինչը նշանակում է Հայաստանի անհապաղ ապաշրջափակում ու սահմանի բացում և պաշտոնապես պարտավորվի, որ այլևս երբեք սահմանի մոտ չի կենտրոնացնի կանոնավոր գորքեր: Հակառակ պարագայում Հայաստանը կարող է ղեկավարվել Վիեննայի կոնվենցիայի 60-րդ հոդվածով, ըստ որի՝ կողմերից մեկի կողմից պայմանագրի էական խախտումները իրավունք են տալիս մյուս մասնակցին պայմանագրից դուրս գալու, այն դադարեցնելու կամ կասեցնելու ամբողջությամբ կամ մասնակի<sup>35</sup>:

Սակայն, ըստ Վիեննայի կոնվենցիայի 65-րդ հոդվածի 1-ին կետի՝ թե՛ Կարսի փաստաթուղթն առ ոչինչ հայտարարելու և թե՛ նրանից դուրս գալու, այն ամբողջությամբ կամ մասնակի դադարեցնելու կամ կասեցնելու դեպքում Հայաստանը պարտավոր է այդ մասին պաշտոնապես գրավոր տեղեկացնել պայմանագրի մյուս մասնակիցներին՝ Թուրքիային, Վրաստանին, Ադրբեջանին և Ռուսաստանին: Ընդ որում, գրավոր փաստաթղթում պետք է նշված լինեն ոչ միայն նման քայլի հիմքերը, այլև առաջարկություններ ներկայացվեն պայմանագրի հետագայի վերաբերյալ<sup>36</sup>: Կարսի փաստաթղթի մասնակիցները պետք է եռամսյա ժամկետում պատասխանեն Հայաստանի գրավոր ուղերձին, իսկ կողմերի միջև ծագած հակասությունների դեպքում հարցի լուծումը պետք է հանձնվի ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանին:

Ինչ վերաբերում է պայմանագրային իրավունքում ընդունված վաղեմության ժամկետի՝ **էստոպելի** սկզբունքին, ապա այս հարցը կարգավորվում է Վիեննայի կոնվենցիայի 45-րդ հոդվածով, որտեղ նշվում է, որ պայմանագիրը չեղյալ համարելու կամ վերանայելու պահանջի ժամկետները համարվում են բացթողնված այն դեպքում, երբ պահանջատեր կողմը նախկինում որոշակիորեն հարմարվել ու լռելյայն համաձայնել է կատարված փաստի հետ: Իսկ երբ կողմը որոշակի գործողությունների միջոցով՝ հայտարարություններ, բողոքի նոտաներ և այլն, հայտնել է իր անհամաձայնությունը, ապա տվյալ փաստաթղթի նկատմամբ չի կարող կիրառվել վաղեմության պահանջի սկզբունքը<sup>37</sup>: Մոսկվայի ու Կարսի փաստաթղթերի հետ կապված՝ վաղեմության ժամկետի պահանջը չի կարող կիրառվել, քանի որ Հայաստանը բողոք է ներկայացրել Մոսկվայի անօրինական գործարքի դեմ, իսկ Պոտսդամի կոնֆերանսում Հայաստանի ու Վրաստանի անունից ԽՍՀՄ-ը տարածքային հարց է բարձրացրել Թուրքիայի առաջ, ինչը պետք է համարել Կարսի փաստաթղթի վիճարկում:

3. Հայաստանը, ղեկավարվելով Վիեննայի կոնվենցիայի 20-րդ հոդվածով և հիմնվելով Կարսի փաստաթղթի 2-րդ և 1-ին հոդվածների միջև առկա հակասությունների վրա, կարող է վերապահումներ կատարել այդ, ինչպես նաև այլ հոդվածների վերաբերյալ<sup>38</sup>: Սակայն միայն առարկություններով բավարարվելով, Հայաստանի Հանրապետությունը վերջնականապես կօրինականացնի Մոսկվայի պայմանագրի հավելվածը հանդիսացող Կարսի փաստաթուղթը, ինչին էլ ձգտում

35 Տե՛ս նույն տեղում, c. 89.

36 Տե՛ս նույն տեղում, c. 91.

37 Տե՛ս *Международное право в документах*, c. 85.

38 Տե՛ս նույն տեղում, c. 75-76.

են թուրքերը, որոնք հայ-թուրքական 2009 թ. հոկտեմբերի 10-ի արձանագրություններում քողարկված կերպով ամրագրել են Հայաստանի կողմից Կարսի փաստաթուղթը ճանաչելու դրույթը:

### Եզրակացություն

**Ամփոփելով** շարադրվածը՝ նշենք, որ առաջարկվող հակաքայլերից յուրաքանչյուրի դեպքում պետք է կատարել լուրջ նախապատրաստական աշխատանքներ, իսկ դրանց ընտրությունը պայմանավորված է լինելու նաև աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային գործընթացներով: Եվ չնայած այն հանգամանքին, որ միջազգային իրավական նորմերն ու սկզբունքները հիմք են ծառայում ազդեցիկ տերությունների համար հետապնդելու իրենց շահերը աշխարհի տարբեր տարածաշրջաններում՝ հաճախ խախտելով այդ նույն նորմերն ու սկզբունքները, այդուհանդերձ անգամ մեծ տերությունները իրենց կատարած ցանկացած գործողություն ձգտում են անպայմանորեն հիմնավորել միջազգային իրավունքի նորմերով: Ուստի Հայաստանի Հանրապետությունն այսօր չպետք է հրաժարվի պաշտպանել ոչ միայն իր, այլև ողջ հայ ժողովրդի օրինական շահերն ու իրավունքներն այն հնարավորություններով, որոնք ընձեռում է միջազգային իրավունքը, մանավանդ, որ մեր հարևանները վաղուց արդեն այդ իրավունքի հիմնավորապես խեղաթյուրված դրույթները օգտագործում են մեր դեմ:

### Summary

## THE INTERNATIONAL-LEGAL EVALUATION OF THE MOSCOW AND KARS AGREEMENTS

On the 90th Anniversary of their Signing

Armen Ts. Marukyan

The agreements signed in Moscow on March 16, 1921 and in Kars on October 13 of the same year, were sealed by gross infringements of norms and principles of International Law. With the help of the document signed in Kars, an attempt was only being made to “legalize” the Bolshevik-Kemal deal; which provides ground to consider the Kars document not as a separate agreement, but as an attachment to the illegal document signed in Moscow.

The Republic of Armenia, as a subject of International Law, today can use the opportunities of International Law to neutralize or at least soften the threats of the aforementioned documents, which are not favourable for the Armenians.

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Գ. (Թ՝) ԳԱՐԻԻ, ՔԻՂ 2 (34) ԱՊՐԻԼ-ԽՈՒՆԻս, 2011

ՎԵՄ համահայկական համդես